ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

27-ը մայիսի 2021թ.

Մասնակցում էին՝ Ժամը 11^{00}

Բացողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ե. Ալեքսանյան:

Օրակարգը՝

1. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով «Քնապարկի, վրանի» գնման ԲՄ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել են և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	<Տեքստորլդ> ՍՊԸ
2	<Ռաֆ-Օջախ> ՍՊԸ
3	<ՌԱՖԷԼ ԳՐԻԳ> ՓԲԸ

բացող Է. Համբարձումյան

բացող Ե. Ալեքսանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 7-ը հունիսի 2021թ.
Ժամը 10^{30}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ուստյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի սպա, կապիտան Ա. Համբարձումյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, մայոր Մ. Երամյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի պետ Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Քնապարկի, վրանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	<Տեքստորլդ> ՍՊԸ
2	<Ռաֆ-Օջախ> ՍՊԸ
3	<ՌԱՖԷԼ ԳՐԻԳ> ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 <Տեքստորլդ> ՍՊԸ-ի և <Ռաֆ-Օջախ> ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<Տեքստորլդ> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «**Վրանի ներքին պաստառը** (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍՏ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «**Վրանի կախովի տաքացնող պատերը** արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ <Տեքստորլդ> ՍՊԸ-ի կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

<Ռաֆ-Օջախ> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «**Վրանի ներքին պաստառը** (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍՏ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «**Վրանի կախովի տաքացնող պատերը** արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 07.06.2021թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և ծանուցել <Տեքստորլդ> ՍՊԸ-ին և <Ռաֆ-Օջախ> ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Նիստը շարունակվել է 14.06.21.թ.: <Ռաֆ-Օջախ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները: <Տեքստորլդ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող Հավելված 1.1-ը: Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: <Տեքստորլդ> ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված արտիկուլ 6746 կամ այլ այլ արտիկուլ, առանց կամ համարժեքի, սակայն մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրից ընդհանրապես հանվել է «(արտիկուլ 6746 կամ համարժեք)» պահանջը: Մնացած անհամապատասխանությունները շտկել է:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 14.06.2021թ. մերժել է <Տեքստորդ> ՍՊԸ-ի հայտը:

Քանի որ <<ՌԱՖԷԼ ԳՐԻԳ> ՓԲԸ-ն ներկայացրել է համարժեք տեխնիկական բնութագիր, հայտը նախագծող անձի կողմից 14.06.2021թ.. ներկայացվել է մասնագիտական եզրակացություն, որի համաձայն մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համարժեք է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Քնապարկեր	հատ	20 000	104 760 000	Առաջարկի բացակայություն					
2	Ձիավորական վրաններ / Վրան՝ ՈՒՍԲ-56/	Լ-կ	80	101 376 000	Առաջարկի բացակայություն					
3	Ձիավորական վրաններ / Վրան՝ ՈՒՍՏ-56/	Լ-կ	80	83 904 000	<Ռաֆ-Օջախ> ՍՊԸ	66666600	79 999 920	<Տեքստորդ> ՍՊԸ	61600 000	73 920 000
								<Ռաֆ-Օջախ> ՍՊԸ	66666 600	79 999 920
								<ՌԱՖԷԼ ԳՐԻԳ> ՓԲԸ	68000 000	81 600 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվել է չկայացած գնային առաջարկի բացակայության հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 17.06.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցն է ճանաչվել <Ռաֆ-Օջախ> ՍՊԸ-ն :

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Գրիգորյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Գ. Ոիստյան

Գնահատող Ա. Համբարձումյան

Գնահատող Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան